ԳԼՈՒԽ Լ.

Հակառակութիւն Վրաց։ Որմն Ս. Յակոբայ։ Հարկահանք Եգիպտոսի։ Դռնապանք Ս. Յարութեան։ Ֆրանչիսկեան կրօնաւորք։ Վանք Ս. Փրկչի։

Ի ԴԱՌԱՐԻ սակաւ ինչ քաղաքական պատերազմայ, նորոգեցաւ կրօնական պատերազմն, և յայն յաւէտ յեկեղեցականս։ Հայք քանիցս անգամ իջին յԵգիպտոս և ելին յատեանս Սուլթանայ 'ի պաշտպանութիւն հայրենի սեփհականութեան իւրեանց, որպէս գրեցաք 'ի վերս անդր։ այլ ոչ կարացին զերծանիլ 'ի հակառակութենէ ազգին Վրաց, զի հանապազ կագէին և կռուէին, և հարստահարէին իսկ զՀայս 'ի տաճարին Ս. Յարութեան։ լինէին առիթ մեծամեծ ընտրուց և տուգանաց, որպէս յայտ առնեն յետագայ բանք հրովարտակին, տուեալ 'ի Մելիք Մէհեմմէտ զոր առեալ են Հայք 'ի նպաստ նեղութեան իւրեանց, յորում յետ վերնագրոյն, ասէ։ Մատոյց գիր աղաչանաց առ բարձրագոյն ատեանն մեր Սարգիս վարդապետն Հայոց, որ ինքն բնակի յԵրուսաղէմ 'ի տաճարին Ս. Յարութեան։ և ազգն Վրաց բռնացեալ 'ի վերայ նորա տուեալ են նեղութիւնս եւ ընտրս։ Եւ ապա պատուիրէ գործակալաց իւրոց թողուլ զազգն Հայոց 'ի նախնական վիճակի և 'ի սովորութեան իւրեանց, որպէս էին 'ի ժամանակին, յորում տիրեցին քաղաքին սրբոյ և գերեցին։ արգելուլ զտարապարտ նեղութիւնս եւ զանտեղի հակառակութիւնս միմեանց, և մնալ տեղին այն 'ի ձեռս Հայոց յԵրուսաղէմ 'ի տաճարին Ս. Յարութեան ըստ առաջին սովորութեան, առանց այլայլելոյ և նուազելոյ զիրաւունս նոցա, ըստ տրամադրութեան հրովարտակաց առաջին թագաւորաց, տուեալ նոցա։ Եւ այժմ բարւոք 'ի միտ առեալ զիմաստ հրովարտակիս, զոր ետու իբրեւ վճիռ գործադրելի, մի արասցեն հակառակ ինչ փոփոխութիւն առանց օրինաւոր մուրհակի։ և ամենայն ոք հնազանդեսցի հրամանիս։ Ի ١٢ Շապան ամսոյ ٧٣٥ (1334)։